ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1713-Ա « 07 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1-4 հավելվածների:

2. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 14-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 103-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում, 3-րդ և 4-րդ կետերում «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյան» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2) Որոշման N 10 հավելվածի Աղյուսակ N 18-ի 2-րդ սյունակում «Երևանի գեղասահքի և տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» բառերը փոխարինել «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» բառերով, իսկ «Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» բառերը փոխարինել «Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» բառերով:

3) Որոշման NN 3, 4, 7, 8 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ